Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ՀՀ ԱՆ-ԾՁԲ-ԲԸԱՀ-ՀՎԿԾ-1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԵՎ

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
(իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ Կատարող), (լիցենզիա N_____, տրված ____ _____ _____թ.), ի դեմս գործադիր տնօրեն Արտավազդ Վանյանի, որը գործում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Ծառայությունների տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում և հավելված 3-ում նշված վճարման ժամանակացույցի համաձայն:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Կատարողն իրավունք ունի.**

2.1.1. Սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան մատուցված պատշաճ ծավալի և որակի Ծառայության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Ծառայության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

2.1.3. Հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում կազմակերպվող վերահսկմանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1. Ծառայությունն իրականացնել ամբողջ ծավալով՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և ՀՀ առողջապահության նախարարի հրամաններին համապատասխան,

2.2.2. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ներկայացնել Ծառայության աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ այլ հաշվետվություններ և տեղեկանքներ՝ համաձայն սույն պայմանագրի 4-րդ հավելվածի,

2.2.3. ապահովել հաստատությունների սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահանջների համապատասխանությունը ՀՀ իրավական ակտերի պահանջներին,

2.2.4. բժշկական կազմակերպությունում ապահովել վարակների համաճարակաբանական և վարակի հսկողության համակարգերի ներդրումը, ինչպես նաև բուժանձնակազմի անվտանգությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 3210-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 3354-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3023-Ա հրամանների պահանջների:

2.2.5. սահմանել տրամադրվող Ծառայության կազմակերպման և իրականացման ներքին կարգ՝ նշանակելով դրա կատարման համար պատասխանատու անձ,

2.2.6. ապահովել Ծառայության որակի վերահսկման հանձնաժողովների և այդ հանձնաժողովների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտի առկայությունը՝ նշանակելով դրա կատարման համար պատասխանատու անձ,

2.2.7. ապահովել ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների փոխհատուցման համավճարային եղանակի կիրառման

կարգով սահմանված դրույթների և ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված՝ համավճարների ներդրման գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերի կատարումը,
2.2.8.բժշկական կազմակերպությունում վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները սահմանել ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի մարտի 26-ի N703-Ա հրամանի պահանջներին համապատասխան,
2.2.9.ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն բուժօգնության և Ծառայության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի մասին,
2.2.10. նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին տնօրենի բացակայության մասին (արձակուրդ, այլ պատճառներ)՝ նշելով փոխարինող անձի կոնտակտային տվյալները և բացակայության նախատեսվող ժամկետը,
2.2.11.ապահովել իրավական ակտերով սահմանված քաղաքացիների իրավունքների պատշաճ իրացումը,
2.2.12. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու հետ կնքել վճարովի կամ համավճարային հիմունքներով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր՝ համաձայն ՀՀ իրավական ակտերով սահմանված օրինակելի ձևերի,
2.2.13. ապահովել իրավական ակտերով սահմանված բուժաշխատողների իրավունքների պատշաճ իրացումը,
2.2.14. ապահովել բուժաշխատողների իրազեկվածությունը Ծառայություն իրականացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների, կառավարության որոշումների, ՀՀ առողջապահության նախարարի հրամանների և սույն պայմանագրի դրույթների վերաբերյալ,
2.2.15. ապահովել բժիշկ-մասնագետների գործուղումը ՀՀ մարզերի բժշկական կազմակերպություններ՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված կարգով,
2.2.16. ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով կազմակերպել բուժաշխատողների մասնագիտական կատարելագործումը,
2.2.17. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.
1) աշխատավարձ,
2) հարկային պարտավորություններ,
3) դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,
4) այլ ծախսեր,
2.2.18. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,
2.2.19. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Ծառայության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը համապատասխան հաշվետվական-տեղեկատվական համակարգերում և արժանահավատ հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակների ներկայացումը Պատվիրատուին՝ սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել տեղեկատվական համակարգի սպասարկումը սեփական միջոցներով՝ հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակների անխափան ներկայացման նպատակով,
2.2.20. նախքան դեղերի և բժշկական պարագաների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին),
2.2.21. հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,
2.2.22. ապահովել վճարովի հիմունքներով և համավճարով մատուցվող ծառայություններից ստացված եկամուտի աճ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշների նկատմամբ,
2.2.23. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,
2.2.24. Պատվիրատուի կողմից վերահսկում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել Պատվիրատուի վերահսկում իրականացնող մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,

2.2.25. կատարել Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով Ծառայության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

2.3.1. Ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել Կատարողի կողմից հաշվետվություններով ներկայացված Ծառայության ծավալները, եթե Կատարողի կողմից բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն մատուցվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի Ծառայություն,

2.3.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը կրկնակի խախտելու դեպքում.

1)առաջարկել համապատասխան իրավասու անձին Կատարողի նկատմամբ կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժեր,

2)կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և պատասխանատվության այլ միջոցներ,

3) միակողմանի լուծել պայմանագիրը,

2.3.3. յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 15 օրվա ընթացքում քննարկել Կատարողի եռամսյակային գործունեության արդյունքները՝ Ծառայության որակը, ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված դրույթների կատարումը, «թեժ գծի» միջոցով կամ այլ աղբյուրներից ստացված բողոք-դիմումները, ոչ պաշտոնական վճարումների կատարման հաստատված դեպքերը, և ելնելով քննարկման արդյունքներից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի համաձայն միակողմանի լուծել պայմանագիրը,

2.3.4. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով.

2.3.5.սույն պայմանագրի համաձայն, ստուգել (վերահսկել) Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների կատարման ընթացքը, ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալները, որակը, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատությունը և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտությունը և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և պահպանումը, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.6. պայմանագրով նախատեսված աշխատանքների վերահսկման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.7. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարում,

2.3.8. օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.3.9.Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.3.10. Նախքան դեղերի և բժշկական պարագաների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը պահանջել Կատարողից դրանց օրինակները տրամադրել Պատվիրատուին:

2.4. **Պատվիրատուն պարտավոր է.**

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Ծառայության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,
2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը, Կատարողի կողմից սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետների պահպանման պայմանով,
2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,
2.4.4. կատարել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ,
2.4.5 գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ,
2.4.6 պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի արդյունքը չընդունելու կամ չմերժելու դեպքում, պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողին տրամադրել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը):

III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է.
3.1.1. ՀՀ օրենսդրությամբ հաստատված կարգով,
3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական պարագաների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:
4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև.
4.2.1. եթե Կատարողի կողմից Պատվիրատուին ներկայացված Ծառայության վերաբերյալ սույն պայմանագրի հավելված 4-ով նախատեսված հաշվետվություններում հայտնաբերված ոչ պատշաճ կամ ոչ արժանահավատ հաշվետվությունների թիվը տարեկան կտրվածքով կազմում է յուրաքանչյուր ձևին համապատասխան ներկայացված հաշվետվությունների 10 տոկոսը կամ ավելին,
4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Ծառայության ծավալները ամբողջությամբ կամ մասնակի չտրամադրելը և/կամ ոչ պատշաճ որակի Ծառայության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում:
4.3. Սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով:
4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով լրացուցիչ պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի պարտավորությունների չկատարման համար:
4.6. Սույն պայմանագրի շրջանակում ներկայացված հաշվետվությունների ստուգմամբ հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին:
4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունից և խախտումները վերացնելու պարտականությունից:
4.8. Տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու պարտականությունից:
4.9. Սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.10. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագիրը լուծվում է՝
6.1.1. Եթե լուծարվել կամ վերակազմակերպվել կամ սնանկ են ճանաչվել Կատարողը, որը այդ դեպքերում պարտավոր է հատուցել Պատվիրատուի կատարած բոլոր ծախսերը.
6.1.2. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2016 թվականը: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են կողմերի միջև 16.12.2015թ.-ից մինչև 15.12.2016 թվականը ծագած հարաբերությունների նկատմամբ, բացառությամբ Պայմանագրի 2.3.6. կետի:
7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
7.3. Սույն պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.4. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործունային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
7.5.Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
7.6. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.7. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ՀՀ ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ:

VIIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝	**Կատարող՝**
ՀՀ առողջապահության նախարարություն	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Արդշինբանկ» «Արաբկիր» մասնաճյուղ
Բանկային հաշիվ՝ 900011001873	Բանկային հաշիվ՝ 2471201669930000
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02625503
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյան	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
,, ,, 2016թ	2016 թ.

Հավելված 1
«____»_____ 2016թ.
N ՀՀ ԱՆ-ԾՁԲ-ԲԸԱՀ-
ՀՎԿԾ-1 գնման պայմանագրի

ՑԱՆԿ

2016 թվականի Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության տեսակների և գների

	Աշխատանքի և ծառայության անվանումը	Չափի միավորը	Գինը (դրամ)
07.04.01.05	ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Նորմատիվներ			
	ըստ բնակչության թվի՝	1 բն հաշվով	
	Երևան	1 բն	200
	Մարզեր	1 բն	400
Հետազոտություններ			
1.	**Մանրէաբանական հետազոտություններ**		
1.1	Խմելու ջուր, բաց ջրամբարների և լողավազանների ջուր (բացի աղիքային ախտածին մանրէներից), սննդային հումք և սննդամթերք, սննդի հետ շփվող արտադրանք, օծանելիքային, դիմահարդարման և հարդարման միջոցներ, դեղորայք և այլն	1 ցուցանիշ	1500
1.2	Լվացուկ (այդ թվում՝ ախտահանման և մանրէազերծման որակի հսկողության վերաբերյալ)	1 հետազ.	500
1.3	Օդ	1ցուցան.	2000
1.4	Հող	1ցուցան.	1500
1.5	Կլինիկական և այլ ախտաբանական նյութի (թարախ, մեզ, խորխ, պունկտատ, կրծքի կաթ և այլն) հետազոտություն, օդակաթիլային վարակների ախտորոշում (մենինգիտ, դիֆթերիա, կապույտ և հարկապույտ հազ), հետազոտություն ստաֆիլոկոկերի, ստրեպտոկոկերի, պնևմոկոկերի և այլ ախտածին և պայմանական ախտածին մանրէների վերաբերյալ	1 նմուշ	3000
1.6	Մանրէաբանական հետազոտություն աղիքային վարակների վերաբերյալ (հիվանդներ և կոնտակտավորներ,առողջացածներ), հակամանրէային պատրաստուկների նկատմամբ զգայնության որոշում	1 նմուշ	2000
1.7	Ստաֆիլոկոկի (այդ թվում՝ կանխարգելիչ) ախտածին սնկերի և այլ մանրէների վերաբերյալ (1 հարուցչի վերաբերյալ) հետազոտություն (ինչպես նաև	1 հետազ	800

	քանակական)		
1.8	Դիսբակտերիոզի, էնտերոպաթոգեն, աղիքային ցուպիկի վերաբերյալ ախտորոշիչ հետազոտություններ, հեմոկուլտուրայի հետազոտություններ և արյան մանրէազերծության որոշում, հետազոտություններ լիստերիաների, կամպիլոբակտերիաների, իերսինիաների (նաև արտաքին միջավայրում) և աճեցման համար հատուկ պայմաններ ու սնուցող միջավայրեր պահանջող այլ ախտածին մանրէների վերաբերյալ, շճաբանական հետազոտություններ (տիֆ-պարատիֆային և այլ վարակների՝ ներառյալ ՊՀԱՌ, ՈՒՀԱՌ և այլն), հետազոտություններ սննդային թունավորակների ժամանակ (1 վարակի վերաբերյալ)	1 նմուշ	4000
1.9	Հետազոտություններ աղիքային վարակների բացիլակրության վերաբերյալ	1 հետազ.	1200
1.10	Ջրում կոլի ֆագի աճի համար հատուկ պայմաններ և սելեկտիվ և ախտորոշիչ միջավայրեր պահանջող մանրէների, և աղիքային ախտածին մանրէների առկայության որոշում	1 հետազ.	4000
1.11	Բոտուլիզմի ախտորոշում և հաստատում (չեզոքացման ռեակցիա՝ պոլիվալենտ շիճուկով)	1 հետազ	15000
1.12	Բոտուլիզմի ախտորոշում և հաստատում (չեզոքացման ռեակցիա՝ մոնովալենտ շիճուկով)	1 հետազ	20000
2.	**Հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հետազոտություններ**		
2.1	Շճաբանական հետազոտություններ հատուկ վտանգավոր վարակների (բրուցելոզի, բծավոր տիֆի, տուլարեմիայի) նկատմամբ	1 նմուշ	3000
2.2	Սիբիրախտի նկատմամբ մանրէաբանական հետազոտություն	1 հետազ.	10000
2.3	Էպիզոոտոլոգիական հետազոտություն	1 հետազ	37 240
2.4	Ժանտախտի և էրիզիպելոյիդի վերաբերյալ	1 հետազ	8 700
2.5	Տուլարեմիայի վերաբերյալ	1 հետազ	7 380
2.6	Լեպտոսպիրոզի վերաբերյալ	1 հետազ	4 850
2.7	Աղիքային իերսինիոզի վերաբերյալ	1 հետազ	6 330
2.8*	Հետազոտություն խոլերայի վերաբերյալ	1 հետազ	12 800
2.9	Հյուսվածքաբանական և հիստոքիմիական հետազոտություն /պրիոնի նկատմամբ/	1 հետազ	17 700
3.	**Մակաբուծաբանական հետազոտություններ**		

3.1	Շրջակա միջավայրի (մրգեր, բանջարեղեն, խմելու ջրի, բաց ջրամբարների ջրի, հողի) հետազոտություններ	1 նմուշ	2000
3.2	Ախտորոշիչ, կանխարգելիչ մակաբուծաբանական հետազոտություններ հելմինթների և նախակենդանիների նկատմամբ	1 հետազ	900
3.3	Շրջակա միջավայրի օբյեկտներից (առարկաներ, մակերեսներ) լվացուկների սանիտարամակաբուծաբանական հետազոտություններ, արտազատված հատվածների հետազոտությունե	1 նմուշ	500
3.4	Շճաբանական հետազոտություններ (էխինոկոկոզի, լեշմանիոզի, ամեոբիոզի , լյամբլյոզի, տոքսոպլազմոզի, կիպտոսպորիդիոզի վերաբերյալ) իմունոֆերմենտային թեստ համակարգով	1 նմուշ	6000
3.5	Մալարիայի պատրաստուկների հսկողական հետազոտություն	1 հետազ	1000
4.	**Միջատաբանական հետազոտություններ**		
4.1.	Բոնիֆիկացիոն աշխատանքներ՝ շինության և բաց ջրամբարների մշակում	1 քառ.մ.	25
5.	**Սանիտարա-քիմիական հետազոտություններ**		
5.1	Տոքսիկ տարրերի և ֆիզ. քիմիական հետազոտություններ	1 ցուցանիշ	1500
5.2	Թունաքիմիկատներ, միկոտոքսիններ հակաբիոտիկներ և այլն	1 խումբ	3000
5.3	Օդի հետազոտություն	1 հետազ.	2000
6.	**Վիրուսաբանական լաբորատոր հետազոտություններ**		
6.1	Վիրուսաբանական հետազոտություններ	1 հետազ	6000
6.2	Հետազոտություններ մոլեկուլյար կենսաբանական մեթոդով (ՊՇՌ)	1 հետազ	10000
6.3	Հետազոտություններ իմունոֆերմենտային մեթոդով	1 հետազ	6000
7.	**Իմունոկանխարգելման աշխատանքներ, իմունոպատրաստուկների բաշխում**	**1 դոզա**	**100**
8.	Ճառագայթաբանական հետազոտություն	1 հետազ	3000
9.	**Այլ իմունոպատրաստուկների ձեռք բերում (անտիռաբիկ վակցիոն, փայտացման անատոքսին, բրոցելյոզի ախտորոշիչներ, բոտուլինային շիճուկներ A,B,E, տուլարեմիայի ախտորոշիչներ)**	**1 տարվա համար**	**15000000**
10.**	Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանում	1 օջախ	17400

Ծանոթություն.*բաց ջրամբարների, գետերի ջրերի, խմելու ջրի, կղանքի, կեղտաջրերի նկատմամբ

Ծանոթություն. Վարակիչ հիվանդությունների մեկ օջախի ախտահանման մակերեսը ընդունել 60 քմ:

Պատվիրատու՝	**Կատարող՝**
ՀՀ առողջապահության նախարարություն	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Արդշինբանկ» Արաբկիր մասնաճյուղ
Բանկային հաշիվ՝ 900011001873	Բանկային հաշիվ՝ 2471201669930000
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02625503
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյան	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
,, ,, 2016թ	2016 թ.

Հավելված 2
«____»_____ 2016թ.
N ՀՀ ԱՆ-ԾՁԲ-ԲԸԱՀ-
ՀՎԿԾ-1 գնման պայմանագրի

ՀԱՇՎԱՐԿ

2016 թվականի Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ծավալների

հազար դրամ

Բաժին, խումբ, դաս, ծրագիր	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Առավելագույն թվաքանակ	2016 թվականի տարեկան ծավալը	
				Հաշվարկային գումար	Պայմանագրային գումար
				1	2
07.04.01.05	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ		5740785	3278081.9	3.229.967,6
	ըստ բնակչության թվի	1բն	3004000	986299.9	
	Մանրէաբանական հետազոտություններ	հետազ	532785	686357.0	
	Հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հետազոտություններ	հետազ	55540	642322.0	
	Մակաբուծաբ ան ակ ան հետազոտություններ	հետազ	182150	171100.0	
	Միջատաբանական հետազոտություններ	Ք.մ	400000	10000.0	
	Սանիտարա -քիմիական հետազոտություններ	հետազ	245700	371600.0	
	Ճառագայթաբանական հետազոտություններ	հետազ	150	450.0	
	Վիրուսաբանական լաբորատոր հետազոտություններ	հետազ	9460	73560.0	
	Իմունոկանխարգելման աշխատանքներ, իմունոպատրաստուկների բաշխում	դոզա	1300000	130000.0	
	Այլ իմունոպատրաստուկների ձեռք բերում (փաս տաց ի ձ ե ռ ք բ ե ր մ ա ն գ ն ե ր ով)	դոզա		15000.0	
	Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանում	օջախ	11000	191400.0	

Պատվիրատու՝	Կատարող՝
ՀՀ առողջապահության նախարարություն	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Արդշինբանկ» Արաբկիր մասնաճյուղ
Բանկային հաշիվ՝ 900011001873	Բանկային հաշիվ՝ 2471201669930000
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02625503
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյան	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյան
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
,, ,, 2016թ	,, 2016 թ.

Հավելված 4
« » 20 թ.
N ՀՀ ԱՆ-ԾՁԲ-ԲԸԱՀ-ՀՎԿԾ-1
Պայմանագրի

ՑԱՆԿ

իրավական ակտերով սահմանված կատարողի կողմից պատվիրատուին ներկայացվող հաշվետվությունների

1.Յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը՝	1) ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի №179-Ն հրամանի №1 հավելվածով հաստատված հանձման-ընդունման արձանագրությունը, 2) ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի փետրվարի 20-ի №297-Ա հրամանով հաստատված Ծառայության ընդունման-հանձնման ակտը (եռամսյակային) 3) ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի 04.10.2012թ N 2245-Ա հրամանով հաստատված «Պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից վճարովի ծառայություններով և համավճարով կատարված աշխատանքների վերաբերյալ (ամսական)» տեղեկանքը, 4) ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի 25.10.2012թ N 2426-Ա հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից վճարված հարկերի, վճարների և աշխատողների թվաքանակի մասին» տեղեկանքը:
2. Յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, իսկ տարեկան հաշվետվությունը՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը ՀՀ կառավարության 28.07.2011թ. №1058-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվությունը»՝ աճողական կարգով /Ձև 0003/:	

Պատվիրատու՝	**Կատարող՝**
ՀՀ առողջապահության նախարարություն	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Արդշինբանկ» Արաբկիր մասնաճյուղ
Բանկային հաշիվ՝ 900011001873	Բանկային հաշիվ՝ 2471201669930000
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02625503
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Կարապետյան	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
,, ,, 2016թ	,, ,, 2016 թ.